# ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
# ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԸՆԹԱՑՔՈՒՄ ԿԱՏԱՐԱԾ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

1. **Գործուղված անձիք**
   Կարեն Աղաբաբյան
   ՀՀ Շրջակա միջավայրի նախարարության իրավախորհրդատու

2. **Գործուղման վայրը և ժամկետները.**
   Դուբայ, Արաբական Միացյալ Էմիրություն, 3-6 հուլիսի 2023 թ.

3. **Հրավիրող կողմը (առկայության դեպքում).**

   Աֆրիկայում և Եվրասիայում չվող գիշատիչ թռչունների պահպանման մասին փոխըմբռնման հուշագրի համակարգող ստորաբաժանումը (Coordinating Unit of the Memorandum of Understanding on the Conservation of Migratory Birds of Prey in Africa and Eurasia – Raptors MOU):

4. **Գործուղման նպատակը (աշխատանքային ո՞ր խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը).**

   Հանդիպման նպատակն է գնահատել գիշատիչ թռչունների պահպանության առաջընթացը Raptor MOU երկրների տարածքում, բացահայտել ապագա առաջնահերթությունները, վերանայել առաջարկվող փոփոխությունները հուշագրում և դրա հավելվածներում, ներառյալ Գործողությունների ծրագրում և ընդգրկված տեսակների ցանկում:

5. **Քննարկված թեմաները (հարցերը).**

   - Համակարգող ստորաբաժանման հաշվետվությունը
   - Տեխնիկական խորհրդատվական խմբի հաշվետվությունը
   - CMS քարտուղարության հաշվետվությունը
   - Զեկուցում ստորագրողների և համագործակցող գործընկերների կողմից. փործնական արդյունքների սինթեզ՝ օգտագործելով առաջարկվող ապագա հաշվետվության ձևաչափը
   - Կարևոր տրածքների պիլոտային ցանցի վերլուծության արդյունքները
   - Բնպահպանական կարգավիճակի գնահատման հաշվետվությունը
   - Գիշատիչ թռչունների պահպանման և կառավարման ռազմավարությունների և համարժեք փաստաթղթերի մշակման կարգավիճակը
   - Թվարկված տեսակների մոնիտորինգի ուժեղացումը

- Զեկույց բալոբանի գլոբալ գործողությունների ծրագրի (SakerGAP) իրականացման վերաբերյալ
- Աֆրիկա-եվրասիական անգղերի պահպանությունը
- Միջազգային միասնական տեսակի գործողությունների ծրագիր ծխագույն բազեի համար
- Ամուրյան բազեի պահպանության նախաձեռնությունը հյուսիս-արևելյան Հնդկաստանում
- Աֆրիկայում, Եվրոպայում և Ասիայում չվող թռչունների միջավայրերի պահպանման և կառավարման առաջնահերթությունների սահմանումը
- Փոխըմբռնման հուշագրի տեքստում և հավելվածներում առաջարկվող փոփոխություններ
- Փոփոխություն Raptors MOU Գործողությունների ծրագրի Աղյուսակ 3-ում թվարկված վայրերի առաջարկման կամ փոփոխման ձևի մեջ
- Ստորագրողների և համագործակցող գործընկերների համար հաշվետվության ձևաչափերը
- Տեխնիկական խորհրդատվական խմբի դիմաց դրվող հերթական առաջադրանքը
- Տեխնիկական խորհրդատվական խմբի նորացումը
- Տեխնիկական խորհրդատվական աշխատանքային պլանը 2023-2026 թթ
- Ընթացիկ ֆինանսական վիճակը և ապագա ֆինանսավորումը.

**6. Հանդիպումները, ելույթները.**

- Հայաստանից ներկայացում չի պահանջվել, սակայն Հայաստանի ներկայացուցիչն ակտիվորեն մեկնաբանել է այլ զեկույցները:
- Հիմնական օրակարգից դուրս հանդիպումները տեղի ունեցան BirdLife International-ի հետ՝ քննարկելու չվող թռչունների համար էներգետիկ ենթակառուցվածքի վտանգների գնահատման հնարավոր նախագիծը և Vulture Conservation Foundation-ի հետ, քննարկելու ապագա համագործակցությունը Հայաստանում անգղերի պահպանության ուղղությամբ:
- Հայաստանի ներկայացուցիչն ընդունվել է Տեխնիկական խորհրդատվական խմբի անդամ հաջորդ ժամանակահատվածի համար (2023-2029 թթ.):

**7. Հանդիպումների ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը.**

Ընդունվել են.

- Համակարգող ստորաբաժանման հաշվետվությունը
- Տեխնիկական խորհրդատվական խմբի հաշվետվությունը
- CMS քարտուղարության հաշվետվությունը
- Տեխնիկական խորհրդատվական խմբի դիմաց դրվող հերթական առաջադրանքը
- Տեխնիկական խորհրդատվական խմբի նորացումը

- Տեխնիկական խորհրդատվական աշխատանքային պլանը 2023-2026 թթ

**8. Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները.**

Հանդիպման ընթացքում արվել են հետևյալ առաջարկությունները (Հայաստանի ներկայացուցչի կողմից) և իրականացվել բանակցություններ.

- Կովկասի էկոտարածաշրջանի համար ստեղծել բազմատեսակ գիշատիչ թռչունների պահպանման գործողությունների ծրագիր:
- Հայաստանը ներառել Wildlife Crime Academy-ի հաջորդ առաջարկի մեջ:



*Գործուղվող՝*
*Կարեն Աղաբաբյան*